IIT Chicago-Kent College of Law
ILLINOIS INSTITUTE OF TECHNOLOGY

S | A | L
School of American Law

Իլլինոյս նահանգի Տեխնոլոգիայի Ինստիտուտի Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջը,Կովկասում Ամերիկյան Իրավունքի Դպրոցի հետ համատեղ, Երևանում և Չիկագոյում հայտարարում է 2016-2017 ուսումնական տարվա համար իրավագիտության մագիստրոսի աստիճանի ծրագրի ընդունելություն՝ 75% կրթաթոշակի տրամադրմամբ

Իլլինոյս նահանգի Տեխնոլոգիայի Ինստիտուտի Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջը, Կովկասում Ամերիկյան Իրավունքի Դպրոցի հետ համատեղ, հայտարարում է երկու փոխկապակցված ծրագրերին Հայաստանյան իրավաբանների համար դիմումների ընդունելություն՝ 75% կրթաթոշակի տրամադրմամբ.

Երկու կիսամյակ տևողությամբ բիզնես իրավունքի ոլորտի ծրագրին, որն անցկացվելու է Երևան քաղաքում, Հայաստան, և Իրավաբանական գիտությունների մագիստրոսի ծրագիրը /մեկ կիսամյակ/՝ Իլլինոյս նահանգի Տեխնոլոգիայի Ինստիտուտի, Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջում, Չիկագո, ԱՄՆ:

Ամբողջ ծրագիրը կենտրոնացած է բիզնես իրավունքի շուրջ, որն իր մեջ է ներառում ամենապահանջված իրավաբանական ոլորտները, ինչպես նաև դրանց կիրառումը միջազգային պրակտիկայում:

Կովկասում Ամերիկյան Իրավունքի Դպրոցը հիմնադրվել է 2012 թ-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գտնվող Չիկագո-Քենթ Իրավունքի քոլեջի գլխավոր գրասենյակի հետ համագործակցության արդյունքում, նպատակ ունենալով ընդլայնելու գիտելիքները, ինչպես նաև տարածելու և հասանելի դարձնելու ամերիկյան իրավական կրթությունը՝ հավասար պայմաններ ստեղծելով տվյալ երկրի իրավաբանների համար: 2015թ-ի օգոստոսից սկսած Կովկասում Ամերիկյան Իրավունքի Դպրոցը սկսել է իր գործունեությունը Երևանում՝ հայաստանյան գործընկեր տիկին Լուսինե Բակումյանի հետ համագործակցությամբ:

Երևանում ուս. տարին սկսվելու է 2016 թ-ի սեպտեմբերին և ավարտվելու է 2017 թ-ի հունիսին: Ուսումնական գործընթացը իրենից ներկայացնում է բացառապես հանգստյան օրերին անցկացվող ինտենսիվ դասախոսություններ ամսական մեկ կամ երկու անգամ՝ յուրաքանչյուրը 10-12 ակադեմիական ժամ տևողությամբ:

Նշված տասը պարտադիր դասախոսությունները կենտրոնացած են հիմնականում բիզնես իրավունքի շուրջ՝ իրենց մեջ ներառելով իրավագիտության ժամանակակից թեմաներ. Իրավաբանական գրավոր խոսք, Միջազգային բիզնես գործարքներ, Է-առևտուր, Առցանց գործարքներ, IP ակտիվների կառավարում, ԱՄՆ և ԵՄ անհատական տվյալների պաշտպանության իրավունք, Միացյալ Նահանգների

Մտավոր սեփականության իրավունք, Բիզնես կազմակերպություններ, Համեմատական իրավունք, ԱՄՆ վարչական իրավունք, Միջազգային քրեական իրավունք և Ամերիկյան իրավական համակարգի ներածություն: Դասախոսությունների ճշգրիտ վերնագրերը և բովանդակությունները կարող են փոփոխվել:

Ամերիկյան Իրավունքի Դպրոցի Ծրագրի բաղադրիչները՝ ուսումնական պլանը, գրականության ցանկը, հանձնարարությունները, ինչպես նաև միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ չափանիշների հիման վրա քննությունների անցկացման համակարգը մշակվում է բացառապես Չիկագո-Քենթ քոլեջի կողմից: Ուսանողները գնահատվում են բացառապես Չիկագո-Քենթի պրոֆեսորների կողմից:

Երևանում անցկացվող ծրագիրն հաջող ավարտելուց հետո, ուսանողներին, կախված իրենց ցանկությունից, անմիջապես կամ երեք տարվա ընթացքում, հնարավորություն կտրվի շարունակել դասընթացները Իրավաբանական գիտությունների մագիստրոսի աստիճանի համար ԱՄՆ, Իլլինոյս նահանգի, Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջում:

Իրավաբանական գիտությունների մագիստրոսի նախնական ծրագրում վաստակած կրեդիտները ամբողջությամբ ընդունվում են Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջի կողմից: Մագիստրոսի դասընթացներն ավարտվում են մեկ կիսամյակում մեկ ուսումնական տարվա փոխարեն՝ «ԱՄՆ, Միջազգային և Տրանսազգային Իրավունք» մասնագիտությամբ Իրավաբանական գիտությունների մագիստրոսի աստիճանի շնորհմամբ:

Չիկագո-Քենթում մեկ կիսամյակ սովորած ուսանողները, կարող են իրենց ցանկությամբ մնալ և սովորել ևս մեկ կիսամյակ՝ արդեն 80% կրթաթոշակով: Սակայն, անկախ դրանից, Երևանյան ծրագրին մասնակցած ուսանողներից «ԱՄՆ, Միջազգային և Տրանսազգային Իրավունք» մասնագիտությամբ աստիճան ձեռք բերելու համար, ինչպես նշված է վերևում, չի պահանջվում երկու կիսամյակի ուսուցանում այլ բավական է ընդամենը մեկը:

<u>Հայաստանում Իրավաբանական գիտությունների մագիստրոսի նախնական ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող թեկնածուներն են՝</u>

- Պետական, հասարակական և մասնավոր սեկտորում աշխատող իրավաբաններ, նոտարներ, որոնք ունեն առնվազն իրավագիտության բակալավրի աստիճան,
- Շահագրգիռ անձինք, ովքեր ստացել են այլ որակավորմամբ բակալավրի աստիճան, սակայն հետագայում ձեռք են բերել իրավագիտության մագիստրոսի աստիճան և միաժամանակ հանդիսանում են ՀՀ փաստաբանների պալատի անդամներ կամ եթե նրանք պլանավորում են ձեռք բերել միայն Երևանում անցկացվող երկու սեմեստր բիզնես իրավունքի մասնակցության վկայական և չեն պլանավորում հետագայում մագիստրոսի աստիճան ձեռք բերել Չիկագո-Քենթում:

- Իրավունքի բակալավրիատի վերջին կուրսում սովորող, ինչպես նաև վերջերս ավարտած և բարձր ՄՈԳ ունեցող անձինք:

<u>Իրավաբանական գիտությունների մագիստրոսի փոխկապակցված ծրագրերի առավելությունները</u>

- Իրավաբանական գիտությունների մագիստրոսի փոխկապակցված ծրագրերի շրջանակներում Երևանում անցկացվող դասընթացներին մասնակցության հնարավորություն՝ առանց աշխատանքից կտրվելու և մասնագիտական ապրելաոճը փոխելու:
- Երևանում Ամերիկյան Իրավունքի Դպրոցի երկու կիսամյակ ծրագրի ավարտից հետո արտոնյալ պայմաններով ընդունելություն՝ Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջի Իրավաբանական գիտությունների մագիստրոսական ծրագրին:
- Ամերիկյան Իրավունքի Դպրոցի երկու կիսամյակ ծրագրի շրջանավարտները իրավունք են ստանում ձեռք բերել «ԱՄՆ, Միջազգային և Տրանսազգային Իրավունք» մասնագիտությամբ Իրավաբանական գիտությունների մագիստրոսի աստիճան Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջում մեկ կիսամյակում երկուսի փոխարեն:
- Ամերիկյան Իրավունքի Դպրոցի երկու կիսամյակ ծրագրի շրջանավարտներին երաշխավորվում է.
  - 75% կրթաթոշակի տրամադրում՝ Չիկագոյում Իրավաբանական գիտությունների մագիստրոսի դասընթացներին մասնակցության համար: Չիկագո-Քենթ քոլեջում Իրավաբանական գիտությունների մագիստրոսի դասընթացների համար սահմանված ուսման վարձը կազմելու է 10.000 ԱՄՆ դոլար՝ 44.000 ԱՄՆ դոլարի փոխարեն:
  - ծրագրի ավարտից հետո 3 տարիների ընթացքում Չիկագոյում դասընթացները շարունակելու իրավունքի պահպանում:
  - Երևանում անցկացվող երկու կիսամյակ դասընթացների ծրագրի համար սահմանված ուսման վարձը երկու կամ երեք փուլերով վճարելու հնարավորություն:
  - անգլերեն լեզվի կատարելագործման հնարավորություն՝ Չիկագոյում մագիստրոսի աստիճանի համար նախատեսված դասընթացներին մասնակցությանը նախապատրաստվելու նպատակով:
  - TOEFL-ից ազատման երաշխավորում:
  - Ուսման որակի ապահովում Չիկագո-Քենթ իրավունքի Քոլեջի կողմից,
  - Փոխհարաբերությունների հաստատում ուսանողների և պրոֆեսորների միջև,
  - Ուժեղ մասնագիտական ցանցի զարգացում,
  - Չիկագո-Քենթ իրավունքի քոլեջում առաջին կիսամյակը ավարտելուց հետո

երկրորդ կիսամյակը 80% կրթաթոշակով սովորելու հնարավորության տրամադրում,

Եվ, վերջապես, Չիկագո-Քենթի իրավունքի Քոլեջը տեղակայված է Չիկագոյի կենտրոնում, որն համարվում է աշխարհում լավագույն իրավական շուկաներից մեկը:

<u>Ուսման վարձը</u>

➢ Ամերիկյան Իրավունքի Դպրոցի երկու սեմեստր ծրագրի շրջանակներում դասընթացների վարձավճարը կազմելու է 5500 ԱՄՆ դոլար:

➢ Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջի իրավաբանական գիտությունների մագիստրոսական ծրագրի վարձավճարը Հայաստանից Ամերիկյան Իրավունքի Դպրոցի շրջանավարտների համար կազմելու է 10.000 ԱՄՆ դոլար՝ 44.000 ԱՄՆ դոլարի փոխարեն, այսպիսով հայաստանյան ուսանողներին տրամադրվում է 75% կրթաթոշակ:

<u>Փաստաթղթերի ներկայացումը</u>

Բոլոր դիմողները պետք է էլեկտրոնային տարբերակով ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը մինչև 2016թ-ի հունիսի 10-ը՝

➢ Ինքնակենսագրություն անգլերեն լեզվով,
➢ Անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
➢ Ուղեկցող նամակ անգլերեն լեզվով,
➢ Երաշխավորագիր անգլերեն լեզվով կամ հայերեն լեզվով՝ անգլերեն պատշաճ թարգմանությամբ, որտեղ պետք է նշված լինի դիմողների կրթական և/կամ մասնագիտական փորձի և/կամ իրականացրած գիտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն երաշխավորող անձի կոնտակտային տվյալների նշումով,
➢ Իրավաբանական գիտությունների բակալավրի դիպլոմի պատճենը: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հետևյալ հասցեներով՝

admission@salcaucasus.ge, lbakumya@kentlaw.iit.edu;
m.meskhi@chicagokentlaw.ge; jeladze@chicagokentlaw.ge :

Ներկայացված փաստաթղթերի չափը չպետք է գերազանցի 10 Մբ: Փաստաթղթերը ներկայացնելուց հետո կստանաք հաստատում: Հակառակ դեպքում, խորհուրդ ենք տալիս դիմել տեղական ներկայացուցչին:

<u>Կարևոր տեղեկություններ</u>

➢ Դիմումներն ընդունվում են մինչև 2016թ-ի հունիսի 10-ը:
➢ Ծանուցումներ թեկնածուների վերջնական ցուցակի համար՝ 2016թ. հունիսի 16-ը:
➢ Հարցազրույց՝ 2016թ. հունիսի 17-ից 30-ը:

- Որակավորման հանձնաժողովի որոշում՝ 2016թ. հուլիսի 12-ը:
- Ուսանող-Ամերիկյան իրավունքի դպրոց պայմանագրի կնքում՝ 2016թ. հուլիսի 14 - 26-ը:
- Հայաստանում Ամերիկյան իրավունքի դպրոցի Իրավաբանական գիտությունների մագիստրոսի նախնական ծրագրի պաշտոնական բացում՝ սեպտեմբեր 2016թ.

Լրացուցիչ տեղեկություններ՝ Իլլինոյս նահանգի Տեխնոլոգիայի ինստիտուտի Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջը, որն առաջատար դիրք է զբաղեցնում է իրավական կրթության բնագավառում, հայտնի է գիտական փորձով և առանձնանում է կրթական նորարարությամբ: Չիկագո-Քենթ իրավաբանական քոլեջը համարվում է Իլլինյոս նահանգի երկրորդ ամենահին իրավունքի դպրոցը: Որպես ԱՄՆ-ում իրավական կրթության առաջատար՝ Չիկագո-Քենթը հիանալի սկիզբ է իրավաբանի մասնագիտական ապագան խթանելու համար: Ապագայի վրա կենտրոնացումը, իրավական գրավոր խոսքի և գործնական փորձի վրա հիմնված ուսուցման կարևորումը, նոր դատավարական հնարքների դասավանդումը Չիկագո-Քենթը դարձնում են հանրահայտ: Չիկագո-Քենթը 1936 թ-ին հավատարմագիր է ստացել Ամերիկյան փաստաբանների ասոցիացիայի կողմից,իսկ 1951 թ-ից անդամակցել է Ամերիկյան իրավունքի դպրոցների Ասոցիացիայի անդամություն:

2015թ-ին Միացյալ Նահանգների News & World Report ամսագիրը Ամերիկյան իրավունքի Չիկագո-Քենթի դպրոցին շնորհել է հետևյալ մրցանակները՝

- դատավարական փաստաբանություն 4-րդ տեղ http://grad-schools.usnews.rankingsandreviews.com/best-graduate-schools/top-law-schools/intellectual-property-law-rankings:
- Մտավոր սեփականության իրավունք 7-րդ տեղ http://grad-schools.usnews.rankingsandreviews.com/best-graduate-schools/top-law-schools/intellectual-property-law-rankings:

Համաձայն Միացյալ Նահանգների News & World Report ամսագրի՝ Չիկագո-Քենթ քոլեջի շրջանավարտների զբաղվածության ցուցանիշը ավարտելուց անմիջապես հետո կազմում է 66.2% և 90.7% ավարտելուց հետո 9 ամսվա ընթացքում:

2012 թ-ից ի վեր Չիկագո-Քենթ Իրավունքի Քոլեջը հաջողությամբ իրագործում է իր արտասահմանյան ծրագիրը Կովկասյան տարածաշրջանում,որի գլխավոր գրասենյակը Թբիլիսիում է.վերջինս աջակցում է իրավաբանության զարգացմանը՝ հարստացնելով փաստաբանների իրավական գիտելիքները: Վերջին երեք տարիների ընթացքում կառավարությունում, դատական իշխանությունում, տարբեր իրավաբանական և բիզնես ոլորտների միջին և բարձր իրավաբանական մակարդակի տեր իրավաբաններից 82-ը արդեն ավարտել են 2 կիսամյակ տևողությամբ ուսումնական ծրագիրը.ընդ որում նրանցից 42-ը Չիկագո-Քենթ իրավունքի դպրոցի

իրավաբանական գիտությունների մագիստրոսներ են,իսկ 26-ը պատրաստվում են 2016 թ-ի օգոստոսից ստանալ մագիստրոսի կրթություն: Իրավունքի ամերիկյան դպրոցի մասին տեղեկություններ կարող եք գտնել՝ www.salcaucasus.ge , www.kentlaw.iit.edu կայքերից:

Կարող եք այցելել նաև՝ http://kentlaw.iit.edu/academics/llm-programs/international-and- comparative-law/special-llm-and-overseas-training-programs էջը:

School of American Law in Armenia, Chicago-Kent College of Law
https://www.facebook.com/pages/School-of-American-Law-for-Armenia/1599679703603387?ref=hl.

School of American Law, Chicago-Kent College of Law
https://www.facebook.com/School-of-American-Law-Chicago-Kent-College-of-Law-319374341492980/?fref=ts

Brief video regarding "What Makes a Law School Great: Inside Chicago-Kent" http://youtu.be/pKu1V5UTjUQ

Չիկագո-Քենթ քոլեջի պաշտոնական ներկայացուցչական գրասենյակները՝ Հայաստանում՝ Երևան, Կորյունի 8/5, հեռախոս՝ +374 093-190-180, Լուսինե Բակումյան:

Վրաստանում՝ Թբիլիսի 0179, Պիքսել Բիզնես Կենտրոն, 34 Չավչավաձե փողոց, 4-րդ հարկ, հետ՝ 22440820, 577 974001, 577 774030, վեբ կայք՝ www.chicagokentlaw.ge: